ԳԼՈՒԽ ԺԶ.

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՅՈՒՄ

Մինչ մի կողմից Թիւրքիան Ազրբէջանի և բոլշևիկների միջոցով օղակում էր Հայաստանը, միւս կողմից տենդագին պատրաստութիւններ էր տեսնում, որպէսզի զէնքի ուժով վերացնէ «հայկական սեպը»: Օլթիի ածխահանքերի գրաւումից յետոյ, Անգորայի կառավարութիւնը դիմեց Հայաստանի կառավարութեան՝ պահանջելով յետ քաշել հայկական զօրքերը: Այդ առթիւ տեղի ունեցաւ գրագրութիւն Թիւրքիայի արտաքին գործոց կոմիսար Բեքիր Սամի բէյի և Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան միջև. Թիւրքիան խօսում էր Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերի լեզուով*). Հայաստանը Բաթումի անունն իսկ չէր ուզում լսել:

Ածխահանքերի գրաւումը, ի հարկէ, պատրւակ էր. Թիւրքիան միջոցներ էր փնտռում՝ ստիպելու համար հայերին, որ հրաժարւեն Եւրոպայի միջամտութիւնից և այն դաշնագրից, որ կազմւած էր Սան-Ռէմոյում և շուտով պիտի ստորագրւէր Սևրում: Ընդհակառակը, հայերը հէնց Եւրոպայի և այդ դաշնագրի հետ էին կապել իրենց յոյսերը և ոչ մի հաւատ չունէին դէպի անմիջական համաձայնութիւնը Թիւրքիայի հետ: Այդ գիտէին Թիւրքերը և պատրաստւում էին՝ Սևրին հակադրել երկաթէ բռունցք:

Այս տեսակէտից պատմական արժէքաւոր վաւերագիր է Մուստաֆա Քեմալի ճառը, որ արտասանեց Ազգային Մեծ Ժողովում՝ պատգամաւորների արած հարցապնդումի վրա. «Լէֆենդիներ, ասում էր Մուստաֆա Քեմալը, մայիս 30-ին և յունիս 4-ին Արևելեան բանակի հրամանատարի կողմից հետևեալ առաջարկներն էին եղած. 1) Կարինում գտնւող մեր պատուիրակութեան շուտափոյթ մեկնումը դէպի Մոսկւա՝ Կարսի և Բաթումի ճամբով. 2) Հայաստանում տեղի ունեցող իսլամական ջարդերի դադարեցումը: Որովհետև հայերը նպատակ ունէին առաջին իսկ առիթով գրաւել Կարինը. Բաթումի և Բրեստ-Լիտովսկի դաշնագրերով մեր բանակի տիրապետութիւնը հայկական բանակի դէմ արդէն ապահովւած լինելով՝ պէտք է, որ գրաւենք Սարըղամիշի և Սողանլուի կիրճերը: Այս առաջարկութիւններից մանաւանդ վերջինը քննելով՝ գործադրութիւնը յարմար նկատւեց և յունիս 6-ին հրաման տրւեց, որպէսզի յարձակողականի համար պատրաստութիւն լինի:

---

*) Տե՛ս այս գրքի վերջին մասը: